բնագրի առաւել մանրամասն վերլուծութիւնը կատարեց Կիրիլ Թումանովը (Studies in Christian Caucasian History, Georgetown, 1963, էջ 229-230), որը նաեւ ոչ լրիւ արդարացուած փորձ կատարեց՝ վերանայելու «Զօրանամակ»-ի կառուցուածքը:



Մեզ հասած «Գահնամակ»-ը վաղ միջնադարի Հայոց արքունիքի համակարգում նախարարական տոհմերի զբաղեցրած եօթ տասնեակ պատուաստիճան-գահերի ցուցակն է՝ ներկայացուած Ս. Սահակ Պարթեւ կաթողիկոսի նամակում, ուր նշուած է նաեւ, որ այն հաստատուել է Սասանեան արքայից արքայի կողմից: Նամակում տրուած վաւերագրի անուանումը՝ «Գահնամակ» (բնագրում՝ «Գահնեմակի»), յիշատակուած է նաեւ հայ մատենագրութեան այլ երկերում: Մովսէս Խորենացին նման պաշտօնական հրովարտակ-վաւերագրի սկզբնաւորումը կապում է Հայաստանում Արշակունեաց արքայատոհմի հիմնադիր Վաղարշակ թագաւորի հետ (ըստ պատմիչին հասած աւանդութեան՝ Բ դար ն. Ք.): Ստեփաննոս Օրբէլեանը, յղելով Ղեւոնդին (որը, գուցէ եւ մեզ յայտնի պատմիչն է, սակայն մեզ հասած նրա Պատմաբանութեան մէջ նման հաղորդում չկայ), տեղեկացնում է Տրդատ Գ թագաւորի արքունիքում գործածուած «Գահնամակ»-ի մասին: Թ դարում շարադրուած «Ներսէս կաթողիկոսի վարք»-ում բերուած է նոյնպէս «Գահնամակ» անուանուած մի այլ բնագիր (թագաւորական եւ նախարարական 167 տոհմերի ցուցակով), թէպէտեւ նրանում որոշակի են ակնյայտօրէն ուշ գրական ծագում յուշող իրողութիւնները: Արշակունեաց թագաւորութեան եւ մարզպանութեան ողջ դարաշրջանի հայ նախարարների կայուն ժառանգական գահերի եւ գահակարգութեան հանգամանքների մասին տեղեկութիւններ են յայտնում նաեւ մեր միւս դասական մատենագիրները: